Վարչական գործ
թիվ ՎԴ/2534/05/13

19 սեպտեմբերի 2013թ. ք.Երևան

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և »Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին« կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելուն, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և »Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին« կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելուն, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջների մասին։ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 12.04.2013 թվականի որոշմամբ բավարարվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ

միջնորդությունը, հայցադիմումն ընդունվել է վարույթ և հրավիրվել է նախնական դատական նիստ։
Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 24.07.2013 գործը նշանակվել է դատաքննության։

Հայցվորի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.

Հայցվորն իր հայցադիմումում նշել է, ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությունից տեղեկատվություն ստանալու հարցումներով պահանջել են »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագրի շրջանակներում գաղտնիության աստիճանը վերանայված տեղեկությունների մասին« գաղտնազերծված տեղեկությունների տրամադրման մասին տեղեկատվություն« ինչպես նաև »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագրի պատճենը։ ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությունը տրամադրել է թերի պատասխան՝ պատասխան չի տվել հարցումներով առաջադրված հարցերին։ Սույն հայցով խնդրվում է ՀՀ Սահմանադրությամբ և կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստի ճանաչում և տեղեկություն ստանալու իրավունքների վերականգնում։
2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրվել է »Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագիրը« որը ստորագրել է նաև Հայաստանի Հանրապետությունը։
2013թ.-ի փետրվարի 11-ին թիվ 194-4 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀԿ-ն (հետայսու՝ նաև ԻԱԿ) դիմել է ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության տնօրեն պարոն Գարիկ Հակոբյանին։
Հարցմամբ ԱԱԾ-ից խնդրվել էր տրամադրել »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագրի շրջանակներում գաղտնիության աստիճանը վերանայված տեղեկությունների մասին հետևյալ տեղեկությունները.
Որ տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել։
Ովքեր կարող են դիմել գաղտնազերծված տեղեկությունները ստանալու համար։
Գաղտնազերծված տեղեկությունները որ մարմնից կարելի է ստանալ։
Հարցումն ԱԱԾ ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2013թ.-ի փետրվարի 11-ին։
2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 հարցմանն ի պատասխան ԱԱԾ-ից ստացվել է

2013թ.-ի փետրվարի 21 թվագրված գրություն։
ԱԱԾ-ի գրությունն ունեցել է հետեւյալ բովանդակությունը.
»ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո« համաձայնագրի պահանջների համաձայն՝ գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնազերծումը իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան։
2013թ.-ի մարտի 7-ին թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր կրկնակի հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀԿ-ն նորից դիմել է ԱԱԾ-ի տնօրեն պարոն Գորիկ Հակոբյանին։
Կրկնակի հարցմամբ ԻԱԿ-ը ԱԱԾ-ին հայտնել է« որ ԱԱԾ-ից ստացված պատասխան գրությունում առկա չեն ԻԱԿ-ի հարցմամբ ներկայացված հարցադրումների պատասխանները։
Կրկնակի հարցմամբ ԻԱԿ-ը ևս մեկ անգամ խնդրել է տրամադրել 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 հարցմամբ խնդրվող տեղեկությունները։
Կրկնակի հարցումն ԱԱԾ ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2013թ.-ի մարտի 7-ին։
2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 հարցմանն ի պատասխան ԱԱԾ-ից ստացվել է 2013թ.-ի մարտի 15 թվագրված գրություն։
ԱԱԾ-ի գրությունն ունեցել է հետեւյալ բովանդակությունը.
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ »Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք« ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու« ստանալու« տարածելու ազատությունը« տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից«։
ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ »Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք«։
»Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին« Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ »Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք։ Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու« տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից«։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ »Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով

հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը«։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ »Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.
եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ« ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է« ապա տվյալ հրապարակման միջոցի« վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք« ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում« որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում« գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը«։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ »Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը« կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է« ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝5-օրյա ժամկետում« պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին« իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը« որն ունի փնտրվող տեղեկությունը«։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ »Տեղեկատվություն տնօրինողը« բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի« մերժում է տեղեկության տրամադրումը« եթե դա՝
պարունակում է պետական« ծառայողական« բանկային« առևտրային գաղտնիք.
խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը« այդ թվում՝ նամակագրության« հեռախոսային խոսակցությունների« փոստային« հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական« նոտարական« փաստաբանական գաղտնիք).
խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները”։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-ին կետի համաձայն՝ »Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ« որոնց տրամադրումը ենթակա է մերժման« ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ«։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ »Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր

հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը)« ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը«։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ »Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ … տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն…«։
ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ »Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան« եթե համարում է« որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով« գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ« միջազգային պայմանագրերով« օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները…«։
ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ »Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը)« որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որեւէ հայցվող գործողություն« սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել« կրում է իր որոշման« գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը«։
ՀՀ Վարչական դատավության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ »Վիճարկման« պարտավորեցման« գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին« որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով«։
ԱԱԾ-ն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված և »Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներն ապահովելու համար պարտավոր էր կատարել։
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված գործողություններից որևէ մեկը« կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որևէ մեկը« ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով։
Խոսքը գնում է հայցվող տեղեկատվությունն ըստ էության տրամադրելու մասին« երբ ըստ Օրենքի ԱԱԾ-ն պարտավոր էր կամ տրամադրել հարցմամբ ներկայացված բոլոր 4 հարցերով խնդրվող տեղեկությունները և փաստաթղթերի պատճենները« կամ«

հայցվող տեղեկությունները հրապարակված լինելու դեպքում տրամադրել տվյալ հրապարակման միջոցի« վայրի և ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին)։
Ըստ Օրենքի ԱԱԾ-ն պարտավոր էր Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել ներկայացված բոլոր 4 հարցերով խնդրվող տեղեկությունները« կամ« եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն (4 հարցերից 1-ը կամ մի քանիսը« բայց ոչ բոլորը) է պարունակում տվյալներ« որոնց տրամադրումը ենթակա է մերժման« ապա տեղեկություն տրամադրեր մնացած մասի (մնացած մի քանի կամ 1 հարցերի) վերաբերյալ« իսկ մնացած մասով մերժեր։ Ընդ որում« տեղեկատվության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով ԱԱԾ-ն պետք է ներկայացնել մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը)« ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը։
Ըստ »Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝ ԱԱԾ-ն պարտավոր էր պատասխան գրությամբ տրամադրել ամբողջական տեղեկատվություն« այն է« անրադառնար ԻԱԿ-ի հարցմամբ բոլոր 4 հարցերով խնդրված տեղեկություններից յուրաքանչյուրին։ Այս առումով« ԱԱԾ-ն պետք է տրամադրեր ԻԱԿ-ի հարցման բոլոր 4 հարցերով խնդրված տեղեկություններից յուրաքանչյուրն ըստ էության« կամ պետք է ներկայացներ խնդրվող տեղեկություններից յուրաքանչյուրի տրամադրման անհնարինության վերաբերյալ տեղեկատվություն (օրինակ՝ տեղեկությունը չտնօրինելու վերաբերյալ)« իսկ խնդրվող տեղեկությունները մերժելու դեպքում պետք է ներկայացներ ԻԱԿ-ի հարցման 4 հարցերով խնդրված յուրաքանչյուր տեղեկությունը մերժելու հիմքերը և համապատասխան նորմերը։
Սույն հայցին նշված գործողություններից յուրաքանչյուրն ԱԱԾ-ի կողմից չկատարելն առավել վառ արտահայտվում է ԻԱԿ-ի հարցումների 4-րդ հարցով հայցված տեղեկատվությունը չտրամադրելու և դրա տրամադրմանն առհասարակ ԱԱԾ-ի կողմից չանդրադառնալու մեջ։ Հարցման 4-րդ հարցով ԻԱԿ-ը խնդրել է տրամադրել 18.04.2011թ. ստորագրված »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագրի պատճենը։ Այս դեպքում խոսքը գնում է պատճեն տրամադրելու մասին։ Պատճենի տեսքով տեղեկատվության առկայությունն« ի տարբերություն տեքստային շարադրանքի տեսքով ներկայացվող տեղեկատվության առկայության՝ մեկնաբանման խնդիր չունի. պատճենը կամ առկա է« կամ առկա չէ։ Ուստի« տվյալ դեպքում ԱԱԾ-ն պետք է կամ տրամադրեր »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագրի պատճենը« կամ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով հիմնավոր մերժեր դրա տրամադրումը։ Նշված գործողություններից որևէ մեկն ԱԱԾ-ն չի կատարել։
ԱԱԾ-ն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից տեղեկատվություն

ստանալու հարցում ստանալուց հետո տրամադրել է պատասխան« կատարել է գործողություն« որով« սակայն« չի ապահովել վերը նկարագրված գործողություններից ոչ մեկը« ինչը ոչ իրավաչափ է։ ԱԱԾ-ն ոչ իրավաչափ գործողությամբ (ոչ պատշաճ պատասխան տրամադրելով) խախտել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները։
Ելնելով վերագրյալից և առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 18« 19-րդ հոդվածներով« »Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին« Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6« 13-րդ հոդվածներով« ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով եւ 11-րդ գլխի պահանջներով դատարանից խնդրել է ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը։
Վերացնել այն հետևանքը« որը առաջացել է ԱԱԾ-ն՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման հետեւանքով« այն է՝ պարտադրել ԱԱԾ-ին տրամադրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2013թ.-ի մարտի 7-ի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն։
Տեղեկություններ վարչական ակտը« վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից փնտրվող տեղեկատվությունը ԱԱԾ-ի կողմից չտրամադրելը վերադասության կարգով չի բողոքարկվել« քանի որ »Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքը նման պարտադիր պայման չի նախատեսում։

Դատաքննության ընթացքում վերոշարադրյալը ամբողջությամբ պնդելով, հայցվորի ներկայացուցիչը խնդրեց դատարանին բավարարել ներկայացված պահանջները։

Պատասխանողի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.

Պատասխանողն հայցադմումի պատասխանում նշել է, որ հայցվորի ներկայացուցիչը իր՝ 11.02.2013թ. N194-4 և 07.03.2013թ. N194-8 գրություններով (հարցադրումների 1-3 կետեր) խնդրել է պատասխանել »Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին«

համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կատարմանը վերաբերող հարցերին։
Համաձայնագիրը կնքվել է 18.10.2011թ. ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում։
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի և »Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին« ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո։
Համաձայնագիրը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 25.02.2013թ. ԱԺՈ-048-Ն որոշմամբ։ Համաձայնագրի 10-րդ հոդվածի համաձայն՝
»Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցագիրն ավանդապահի ստանալուց 30 օր հետո։
Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո«։
ՀՀ ԱԳՆ 23.04.2013թ. N16/04312 գրության համաձայն՝ 22.04.2013թ. դրությամբ Համաձայնագիրն դեռևս ուժի մեջ չի մտել« քանի որ այն վավերացվել է միայն Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության կողմից։
Հայցվորին 21.02.2013թ. N2/3/3-229 և 15.03.2013թ. N2/3/3-978 գրություններով տրված պատասխանների ժամանակ Համաձայնագիրն ուժի մեջ չէր մտել և ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը չէր կազմում։
Հայցվորի ներկայացուցչի 1-3-րդ հարցադրումները, ըստ էության, վերաբերում են Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացմանը« իսկ նման համագործակցություն դեռևս չի իրականացվել« քանի որ Համաձայնագիրն ուժի մեջ չի մտել և հետևաբար գոյություն չունեցող համագործակցության մասին՝ մասնավորապես որ տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել 1-ին հարցադրմանը պատասխանելը հնարավոր չէր« իսկ գաղտնազերծված տեղեկությունները ստանալու վերաբերյալ 2-րդ և 3-րդ հարցադրումներին տրվել է հստակ պատասխան և նշվել է »... համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո« համաձայնագրի պահանջների համաձայն՝ գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնազերծումը իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան«։
Նշված պատասխաններում հստակ նշված է« թե գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնազերծումը որ մարմինների կողմից և ինչպես է իրականացվելու։
ՀՀ ԱԱԾ պատասխաններն ընդգրկում են ՀՀ ԱԱԾ տնօրինման տակ գտնվող ամբողջական տեղեկատվությունը« հավաստի և հիմնավոր են« ինչն ամբողջությամբ համապատասխանում է »Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի և Համաձայնագրի 4-րդ« 5-րդ և 10-րդ հոդվածների պահանջներին։
Ինչ վերաբերում է Համաձայնագրի պատճեն տրամադրելուն (հարցադրումների 4-րդ

կետ)« ապա դարձյալ պետք է նշել« որ Համաձայնագիրն այդ ժամանակ ուժի մեջ չէր մտել և ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը չէր կազմում։ Բացի այդ« Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի« 46-րդ հոդվածի 1-ին մասի և 49-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ միջազգային պայմանագրի նույնական հայերեն տեքստը հաստատվում է ՀՀ ԱԳՆ կողմից« ՀՀ միջազգային պայմանագրի գրանցման միասնական գրանցամատյանը վարում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և վերջինիս կողմից է հրապարակվում »Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը«։ Հետևաբար ՀՀ ԱԱԾ կողմից Համաձայնագրի պատճեի տրամադրումը հայցվորի ներկայացուցչին չէր բխում նշված իրավանորմերի պահանջներից։
Այսպիսով« ՀՀ ԱԱԾ պատասխանները համապատասխանում են վերը թվարկված իրավանորմերի պահանջներին և նշված ապացույցների հիմքով հիմնավոր են« իսկ հայցվորի ներկայացուցչի յուրաքանչյուր պահանջ ամբողջությամբ անհիմն ու անընդունելի է։ Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչ.դատ.օր-ի 83-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը դատարանից խնդրել է հայցը ամբողջությամբ մերժել։

Դատաքննության ընթացքում պնդելով հայցադիմումի պատասխանում բերված փաստարկները, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը խնդրեց մերժել ներկայացված պահանջը։

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՀՀ վարչական դատաանը գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝
1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝
1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում,
եթե՝
ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ վարչական արդարադատություն հայցելու իրավաչափությունը առկա կլինի միայն այն դեպքում, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտված կլինեն են կամ անմիջականորեն կարող էին խախտվել անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները։
Տվյալ դեպքում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպությունը ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով խնդրել է ճանաչել Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և »Մարու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին« կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը պարտադրել տրամադրելու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն։
Գործի փաստերից երևում է, որ 2013թ.-ի փետրվարի 11-ին թիվ 194-4 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (հետայսու՝ նաև Հայցվոր) դիմել է ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանին։
Նշված հարցմամբ Հայցվորը »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագրի շրջանակներում խնդրել է ներկայացնել հետևյալ տեղեկությունները.
1. Ո՞ր տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել,
2. Ո՞վքեր կարող են դիմել գաղտնազերծված տեղեկությունները ստանալու համար,
3. Գաղտնազերծված տեղեկությունները ո՞ր մարմնից կարելի է ստանալ,
4. Խնդրվել է տրամադրել »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« 18.04.2011թ. համաձայնագրի պատճեն։
2013թ.-ի փետրվարի 11-ի թիվ 194-4 հարցման կապակցությամբ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության գլխավոր վարչության պետ Ս.Մելքոնյանը 2013թ.-ի փետրվարի 21 թվագրված գրությամբ հայտնել է հետևյալը. »»ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի

վերանայման կարգի մասին« համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո« համաձայնագրի պահանջների համաձայն՝ գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնազերծումը իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան«:
ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝
Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:
»Տեղեկատվության ազատության մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:
Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝
Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝
1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը.
2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.
3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.
4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.
5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:
Նշված իրավանորմերից հետևում է, որ թեև օրենքով յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը, այդուհանդերձ, փնտրվող տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է դիմել այն իրավասու մարմնին, որը տնօրինելիս կլինի փնտրվող տեղեկատվությունը, քանի որ փնտրվող տեղեկատվությունը տրամադրվում է այն տնօրինողի կողմից:
Դատաքննությամբ հաստատվեց, որ »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին« համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) կնքվել է 18.10.2011թ. ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում:
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի և »Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին« ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո:

Համաձայնագիրը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 25.02.2013թ. ԱԺՈ-048-Ն որոշմամբ։
Համաձայնագրի 10-րդ հոդվածի համաձայն՝
»Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցագիրն ավանդապահի ստանալուց 30 օր հետո։
Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո«։
Մինչդեռ, Հայցվորը խնդրել է ներկայացնել այնպիսի տեղեկություններ, որոնց ստանալու կարգը, տրամադրվելիք տեղեկատվության ծավալը, տեղեկատվություն ստանալու իրավունք ունեցող անձանց և դրանք տրամադրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց կազմը սահմանված է հենց այդ Համաձայնագրով։

Եվ որպեսզի որևէ մեկը նշված Համաձայնագրով սկսի կրել որոշակի իրավունքներ կամ պարտականություններ, անհրաժեշտ է, որպեսզի Համաձայնագիրն ուժի մեջ լինի։
Գործում առկա՝ ՀՀ ԱԳՆ 23.04.2013թ. N16/04312 գրության համաձայն, 22.04.2013թ. դրությամբ Համաձայնագիրն դեռևս ուժի մեջ չի մտել« քանի որ այն վավերացվել է միայն Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության կողմից։
Այսինքն, ակնհայտորեն երևում է, որ Համաձայնագիրն ուժի մեջ մտած չլինելու փաստի հաշվառմամբ պատասխանողի կողմից Հայցվորին 21.02.2013թ. N2/3/3-229 և 15.03.2013թ. N2/3/3-978 գրություններով տրված պատասխանների ժամանակ այդ Համաձայնագիրը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը չէր կազմում։
Նշված փաստն էական է, քանի որ, ինչպես նշվեց, փնտրվող տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է դիմել այն իրավասու մարմնին, որը տնօրինելիս կլինի փնտրվող տեղեկատվությունը։
Հետևաբար, Հայցվորի կողմից կատարված հարցումների ժամանակ և այդ հարցումների պատասխան տալու ժամանակ պատասխանողը Համաձայնագրով դեռևս չէր կարող կրել որևէ իրավունք կամ պարտականություն, կամ, այլ կերպ ասած, վերը նշված ժամանակահատվածում պատասխանողն օրենքով սահմանված կարգով չէր հանդիսանում Հայցվորի կողմից փնտրվող տեղեկատվությունը տնօրինող մարմին, հետևաբար, օրենքով սահմանված կարգով չէր կարող տրամադրել փնտրվող տեղեկավությունը՝ սահմանափակված լինելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով միայն Սահմանադրությամբ կամ օրենքներով սահմանված կարգով գործողություն կատարելու սահմանադրական կանոնով։
Հետևաբար, ՀՀ վարչական դատարանն իրավաչափ է համարում պատասխանողի կողմից Հայցվորի հարցման կապակցությամբ տրված պատասխանն առ այն, որ »ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը

սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո» համաձայնագրի պահանջների համաձայն՝ գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնազերծումը իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան։
Ինչ վերաբերում է Համաձայնագրի պատճեն տրամադրելուն» ապա ՀՀ վարչական դատարանը հարկ է համարում նշել, որ »Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի» 46-րդ հոդվածի 1-ին մասի և 49-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ միջազգային պայմանագրի նույնական հայերեն տեքստը հաստատվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից» ՀՀ միջազգային պայմանագրի գրանցման միասնական գրանցամատյանը վարում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը։
Այսինքն, վերը նշված իրավանորմից երևում է, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից է հրապարակվում »Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը» ։
Հետևաբար, Համաձայնագրի պատճեն պատասխանողից ստանալու Հայցվորի պահանջը չի բխում »Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 12-րդ և »Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» օրենքի շրջանակներից, հետևաբար, այդ պահանջի մասով հայցը նույնպես ենթակա է մերժման։
Դատական ծախսերի հարցին անդրադառնալով՝ ՀՀ վարչական դատարանը գտավ, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի հիմքով Հայցվորից պետք է պետական բյուջեի օգտին բռնագանձել 4.000 դրամի չափով պետական տուքրի գումար, քանի որ պետական տուրքի վճարումը ՀՀ վարչական դատարանի 12.04.2013թ. որոշմամբ հետաձգվել էր, միևնույն ժամանակ հայցը դատարանի կողմից մերժվում է։
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

« Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և »Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին« կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելուն, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջների մասին, մերժել։
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»հասարակական կազմակերպությունից ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձել 4.000 (չորս հազար) դրամ, որպես հետաձգված պետական տուրքի գումար։
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարան։